ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 774-Ա

ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԵՎ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՈԼՈՐՏԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԴՐԱ ԿԱԶՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ

Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 16-րդ մասով՝

1. Ստեղծել պրոբացիայի և քրեակատարողական ոլորտին առնչվող հարցերի քննարկման խորհրդակցական հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով)՝ Պրոբացիայի և Քրեակատարողական ծառայությունների, պետական այլ գերատեսչությունների և շահագրգիռ կողմերի միջև միջգերատեսչական գործուն համագործակցությունը խթանելու, ինչպես նաև ոլորտի օրենսդրության կատարելագործման և համապատասխան օրենսդրական դրույթների իրականացմանն աջակցելու նպատակով:

2. Հաստատել՝

1) հանձնաժողովի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Սույն որոշմամբ հաստատված հանձնաժողովի կազմում ներառված անձանց արձակուրդում կամ գործուղման մեջ գտնվելու ընթացքում նրանց հանձնաժողովի

անդամի իրավունքներն ու պարտականությունները ժամանակավորապես փոխանցվում են նրանց փոխարինող պաշտոնակատարներին, իսկ վերջինիս բացակայության դեպքում համապատասխան գերատեսչության կողմից գրավոր կարգով ներկայացվում են մասնակցության իրավունք ունեցող թեկնածուի տվյալները (անուն-ազգանունը, փոխարինման ժամկետը և այլ տվյալներ):

4. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեական օրենսդրության, քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի քաղաքականության մշակման վարչության պետն ի պաշտոնե հանդիսանում է հանձնաժողովի քարտուղար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

04.09.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ